ԱՆՆԵՎԻՍ ՎԱՆ ԴԵՆ ՀՈՒՔ[1]

Հարվարդի համալսարան

ՓԻԼՈՆԻ ԵՐԿԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ[2]

Բանալի բառեր՝ *Փիլոն Ալեքսանդրացի, Ալեքսանդրիայի հրեական համայնք, Կղեմես Ալեքսանդրացի, Օրիգենես, գրադարան, փոխառություն, տարբեր լսարաններ:*

1. Ներածություն

Հայտնի է, որ հայերեն թարգմանությունը շատ կարևոր է Փիլոնի գործերը մեզ հասցնելու առումով, չէ՞ որ դրանց մի մասը հունարեն սկզբնագրով չի պահպանվել: Հայերեն թարգմանությունները կարևոր են նաև Աստվածաշնչի, ծիսական գրքերի, վաղ քրիստոնյա հեղինակների և փիլիսոփայական գրականության ուսումնասիրման համար:

Փիլոնն ապրել է Ալեքսանդրիայում, իսկ հայերի կապը Ալեքսանդրիայի հետ վկայում են այնպիսի հեղինակների թարգմանությունները, ինչպիսիք են Դիոնիսիոսը (մհ. 264 թ.), Աթանաս (մհ. 373 թ.) և Կյուրեղ (մհ. 444 թ.) Ալեքսանդրացիները: Ալեքսանդրյան միջնորդավորված հետքեր ենք տեսնում Գրիգոր Սքանչելագործի (մհ. 270 թ.) և Եվսեբիոսի (մհ. 339/340 թ.) մոտ: Հայկական միջավայր Փիլոնը մտել է ուշ անտիկ ժամանակաշրջանում: Ինձ հետաքրքրող շրջանն ավելի վաղ է՝ այն սկսվում է Ալեքսանդրիայում Փիլոնի մահից մոտ մեկ և կես դար հետո:

II դարավերջի և III դարասկզբի վաղ քրիստոնյա հեղինակներ Կղեմեսը և Օրիգենեսը (հայկական ավանդույթում՝ Որոգինես) ծանոթ էին իրենց հայրենակից Փիլոնի գրվածքներին՝ ստեղծված I դարի սկզբներին: Նրանք հանվանե չեն հիշատակել իրենց հրեա նախորդին, սակայն բազում առիթներով օգտագործել

---

[1] Աննեվիս վան դեն Հուքը հունական և լատինական գրականություն է դասավանդել Հարվարդի համալսարանի Divinity School-ում 1989-ից մինչև 2016 թ. թոշակի անցնելը: Նա *Clement of Alexandria and Philo* (1988) մենագրության հեղինակն է և հրատարակել է Կղեմես Ալեքսանդրացու *Stromateis* IV-ի հունարեն բնական բնագիրը (2001): Իր ամուսնու՝ Ջոն Հերոմանի հեղինակակցությամբ գրել է *Pottery, Pavements, and Paradise* (2013) գիրքը:

[2] Անգլերենից թարգմանությունը՝ Գոհար Մուրադյանի:

են նրա խոսքերը, գրեթե չանդրադառնալով դրանց աղբյուրին: Քրիստոնյա հեղինակներն օգտվել են Փիլոնի՝ Աստվածաշնչի իմացությունից ու այլաբանական մեկնությունից և հետևել նրա փիլիսոփայական ուղիներին: Քրիստոնյաները, ինչպես օրինակ՝ Կղեմեսը, Փիլոնին և հրեա-հելլենիստական կամ հրեա-քրիստոնյա հեղինակներին ճանաչում էին գրական աղբյուրներից: Որևէ վկայություն չկա, թե նրանք ուղղակի կապ են ունեցել հրեա համայնքի հետ: Կղեմեսի ալեքսանդրյան նախորդների, օրինակ՝ Բասիլիդեսի, Վալենտինոսի և Հերակլիոնի երկերի փոքրաթիվ բեկորները վկայում են, որ նրանք էլ, ի սկզբանե, հունական կրթություն են ստացել, սակայն այդ բեկորները չափազանց սակավաթիվ են՝ Փիլոնի հետ որևէ կապ գտնելու համար: Ամեն դեպքում, այս և այլ կորսված երկերի հեղինակները կարող էին կապ ստեղծել Փիլոնի և հետագա քրիստոնեական ալեքսանդրյան ավանդույթի միջև, սակայն այդ անցման բնույթն ու չափը մնում են ենթադրությունների ոլորտում[3]: Ուստի, Փիլոնին վստահաբար օգտագործած առաջին հեղինակը Կղեմեսն է:

Երկու հեղինակի համեմատելը միշտ դժվար խնդիր է. հաճախ տարբեր են նրանց արծարծած թեմաները, ինչպես նաև այն խնդիրները, որ արդիական են այս կամ այն ժամանակաշրջանում: Ի տարբերություն Կղեմեսի՝ Փիլոնը հիմնականում առնչվել է Հնգամատյանի հետ: Ծննդոց և Ելից մեկնությունները պարունակում են այդ գրքերի տների կարճ բացատրություններ: «Այլաբանական մեկնություն»[4] շարքում հեղինակը Ծննդոց գրքի առանձին տներ մեկնում է ընդարձակ ծավալումներով, իսկ «Օրենքի մեկնություն»[5] շարքում նրա լուսաբա-

---

[3] **David T. Runia**, *Philo in Early Christian Literature: A* Survey, Assen: Van Gorcum, 1993; **D. T. Runia**, *Philo and the Church Fathers: A Collection of Papers*, Leiden: Brill, 1995; **Annewies van den Hoek**, *Clement of Alexandria and His Use of Philo in the Stromateis: An Early Christian Reshaping of a Jewish Model*, Leiden: Brill, 1988; **A. van den Hoek**, "Techniques of Quotation in Clement of Alexandria. A View of Ancient Literary Techniques," *Vigiliae Christianae*, 50/3, (1996), pp. 223-243; "The Catechetical School of Early Christian Alexandria and its Philonic Heritage," in *Harvard Theological Review* **90/1 (1997)**, pp. **59-87**; "Philo and Origen: A Descriptive Catalogue of their Relationship," *The Studia Philonica Annual* **12 (2000)**, pp. **44–121**.

[4] Այս շարքը ներառում է 17 երկ, որոնցից մեկը մեզ է հասել նաև հունաբան շրջանի հայերեն թարգմանությամբ՝ «Աստուածային օրինացն այլաբանութիւն» (= Legum allegoriae I, II, իսկ III գիրքը չի թարգմանվել), *Փիլոնի Հեբրայեցւոյ Ճառք, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ*, Վենետիկ, 1892, էջ 105-177 [ծանոթ. թարգմանչի]:

[5] Այս շարքը ներառում է 8 երկ, որոնցից հունաբան շրջանի հայերեն թարգմանությամբ մեզ են հասել հետևյալ երկերը՝ «Կեանք իմաստնոց» (նույն գրքում, էջ 33-104 = De Abrahamo), «Յաղագս տասն բանից» (անդ, էջ 220-267 = De Decalogo), «Յաղագս քահանայիցն և երկոտասան ականց» (անդ, էջ 178-200 = De specialibus legibus I 79-81, 131-161), «Յաղագս բագնին իրաց» (անդ, էջ 201-267 = De specialibus legibus I 285-345), «Յաղագս

նումներն ավելի թեմատիկ են։ Այս երկերի փոխհարաբերության մասին զանազան տեսություններ են առաջ քաշվել։ Մասնավորապես նշվել է, որ դրանց կառուցվածքը կարող է արտացոլել տարբեր մակարդակի ուսուցողական շրջանակներ և տարբեր լսարաններ՝ սկսնակ աշակերտներից մինչև Աստվածաշնչի մեկնությանը քաջածանոթ ուսյալներ և ունկնդիրների ավելի լայն շրջանակներ[6]*։ Սրա մասին՝ ստորև։ Փիլոնի օրոք հրեա համայնքը համեմատաբար մեծ ու ինքնավար էր, նաև կապված հունական կամ հելլենիստական մշակույթի հետ։ Նախորդ՝ Պտղոմեոսյան շրջանի համեմատաբար խաղաղ ժամանակից հետո, Եգիպտոսի նվաճումը Հռոմի կողմից, համայնքում պառակտումներ առաջ բերեց՝ հույների ու հրեաների միջև լարվածությամբ և հակահրեական խառնակչություններով։ Ինչ-որ պահի Փիլոնը ստիպված էր թողնել իր մտավոր զբաղմունքն ու գլխավորել պատվիրակությունը Հռոմի կայսերական արքունիք՝ ակնկալելով, որ կկարողանա հատուցել Ալեքսանդրիայի հրեաներին պատճառած վնասները*[7]*։*

2. Կղեմես Ալեքսանդրացի

Ի տարբերություն Փիլոնի և Օրիգենեսի՝ Կղեմեսը Ալեքսանդրիայում չի ծնվել։ Ապրել է մոտ 150-215 թթ. և մինչև Ալեքսանդրիա գալը ճամփորդել արևելյան Միջերկրյայքով՝ փնտրելով ուսուցիչներ։ Նա, սակայն, հիշատակում է

թէ ոչ շնայցես» (անդ, էջ 268-284 = De specialibus legibus III 8-63): **Ս. Վարդազարյան**, «Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն լուծմունքները», *ՊԲՀ* № 1, **2005**, էջ **186**, ծանոթ. 4 [ծանոթ. թարգմանչի]:

6 **James R. Royse**, "The Works of Philo," in *The Cambridge Companion to Philo*, ed. **A. Kamesar**, Cambridge: Cambridge University Press, 2009, pp. 32-64; **G. E. Sterling**, "The School of Sacred Laws: The Social Setting of Philo's Treatises," *Vigiliae Christianae* 53 (1999), pp. 148-64; **G. E. Sterling**, "Philo's School: The Social Setting of Ancient Commentaries," in **Beatrice Wyss, Rainer Hirsch-Luipold and Solmeng-Jonas Hirschi** (edd.), *Sophisten in Hellenismus und Kaiserzeit: Orte, Methoden und Personen der Bildungsvermittlung, Studien und Texte zu Antike und Christentum* 101, Tübingen: Mohr Siebeck, 2017, pp. 123–42; **G. E. Sterling**, "The School of Moses in Alexandria: An Attempt to Reconstruct the School of Philo," in **Gabriele Boccaccini and Jason Zurawski** (edd.), "Education in the Ancient World", *Beihefte zur Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft* 228, Berlin: De Gruyter, 2017, pp. 141-66.

7 Փիլոնի «պատմական» երկերը՝ In Flaccum և դրա շարունակությունը հանդիսացող Legatio ad Gaium. E. Mary Smallwood, *Philonis Alexandrini Legatio ad Gaium*, Edited with an Introduction, Translation, and Commentary, Leiden: Brill, 1961; **Pieter W. van der Horst**, *Philo's Flaccus: The First Pogrom: Introduction, Translation, and Commentary* (Philo of Alexandria Commentary Series 2), Leiden; Boston: Brill, 2003:

միայն մեկ ուսուցչի՝ Պանտենուսի անունը[8], որն ըստ Եվսեբիոսի՝ Ալեքսանդրիայում գլխավորում էր մի հոգևոր դպրոց, և Կղեմեսը նրա հաջորդը եղավ[9]։ 202/3 թ. Կղեմեսը թողեց Ալեքսանդրիան, հավանաբար հալածանքներից խուսափելու համար և ըստ ոմանց՝ գնաց Պաղեստին, բայց ըստ այլ աղբյուրների՝ Կապադովկիա[10]։ Ալեքսանդրիայում մնալու ժամանակը հստակ հայտնի չէ, սակայն այնտեղ է նա գրել իր աշխատությունների զգալի մասը՝ Protrepticus, Paedagogus և Stromateis-ի մեծ մասը[11]։ Ֆրանսիացի բանասեր André Méhat-ը կազմել է Կղեմեսի կենսագրությունը՝ հիմնված նրա երկերում եղած տեղեկությունների վրա։ Ներքին փոխադարձ հղումներն օգնում են ժամանակագրական հերթականություն հաստատել՝ Protrepticus (մոտ 195 թ.), Paedagogus (մոտ 197 թ.), Stromateis 1 (մոտ 198 թ.), Stromateis 2-5 (մոտ 199-201 թթ.) և Stromateis 6-7 (մոտ 203 թ.)։ Վերջինը՝ հավանաբար Ալեքսանդրիայից հեռանալուց հետո[12]։

Protrepticus-ը ոչ քրիստոնյաներին ուղղված՝ քրիստոնեություն ընդունելու խրատ է, որն ըստ նրա՝ միակ ճշմարիտ փիլիսոփայությունն է։ Երկը ջատագովական է։ Այն մերժում է հունական կրոնն ու առասպելաբանությունը, պնդելով, որ հրեական Սուրբ գիրքն ավելի հին է, ուստի և ավելի պատվելի, քան Պլատոնի փիլիսոփայությունը։ Paedagogus-ը եռամաս գործ է, որում վերջերս մկրտված կամ շուտով մկրտվելիք քրիստոնյաներին մատուցվում են զանազան աստվածաբանական և բարոյական խնդիրներ։ Առաջին գիրքը տեսական բնույթի է, իսկ մյուս երկուսը ծանրանում են առօրյա կյանքի գործնական հարցերի՝ ուտելիքի, ըմպելիքի, հագուստի, սանրվածքի և նման այլ բաների վրա։ Stromateis-ը (Στρωματεῖς, բառացի՝ գույնզգույն լաթերից կարված վերմակ, ուստի և՝ խառը բաներ) նախատեսված է կրթված լսարանի համար, աստվածաբանական գրվածքների մի շարք է՝ լի մեջբերումներով հին հունական, հրեական և քրիստոնեական գրականություններից[13]։ Գրքերը թույլ են կապակցված։ Դրանցում

---

8 **Clement**, *Stromateis* 1, 11, 2.

9 **Eusebius**, *Historia Ecclesiastica* 5, 10; 6, 6; 6, 13-14.

10 **Eusebius**, *HE* 6, 14, 8, **Pierre Nautin**, *Lettres et écrivains chrétiens des IIe et IIIe siècles*, Paris: Cerf, 1961, 18. 101.

11 Կղեմեսի երկերի գլխավոր հրատարակությունն իրականացրել են Stählin-Früchtel-Treu: GCS Clemens Alexandrinus I–IV, 21970, 31972, 41985, 21980 (index); նաև տարբեր աշխատասիրողներ՝ Sources Chrétiennes ֆրանսիական մատենաշարում: SC 30 (1951), 38 (1954), 278-279 (1981), 428 (1997), 446 (1999), 463 (2001):

12 **André Méhat**, *Étude sur les 'Stromates' de Clément d'Alexandrie*, Paris: Seuil, 1966, p. 54.

13 Կղեմես Ալեքսանդրացու Protrepticus-ը այն հունարեն երկն է, որից թարգմանաբար մի շարք հատվածներ է քաղել իր նամակներում Գրիգոր Մագիստրոսը: Երկու զուգահեռ ունի նաև Stromateis-ի հետ: **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթ և եւ չափաբերականք*, ՄՀ, հ. ԺՁ, ԺԱ դար, Երեւան, 2012, էջ 100-102, 107, 117, 209, 222-224, 242, 249, 252, 266, 292-293, 304, 308, 323-325, 364, 371-372 [ծանոթ. թարգմանչի]:

քննվում են քրիստոնեական փիլիսոփայության և հունական գիտության, նաև հավատքի և գիտելիքի փոխհարաբերությունները: Կան մեկնությանը և սիմվոլիկ լեզվին վերաբերող հատվածներ, ուրիշներում քննարկվում են ամուսնության և նահատակության հետ կապված բարոյական հարցեր: Ամենուր այն գաղափարն է, որ հավատացյալը պետք է ձգտի կատարելության և ապրի զուսպ կյանքով:

Տարբեր լսարանների համար նախատեսված այս երկերում Կղեմեսը ներմուծում է Փիլոնի խոսքեր ու գաղափարներ՝ երբեմն մի քանի բառ որևէ սուրբգրային մեջբերման առիթով, երբեմն էլ ընդարձակ հատվածներ: Իմ թեզում, արդեն վաղուց, ես փորձել եմ մի մեթոդ մշակել, որով գնահատեմ, թե ինչպես է Կղեմեսը մեջբերում Փիլոնին: Դիտարկելով այլ հեղինակներից Կղեմեսի մեջբերումները՝ կարելի է ցույց տալ, որ նա հատուկ եղանակով է դիմում ուրիշների, այդ թվում՝ Փիլոնի երկերին: Նա փոխառում է ուրիշների խոսքերը և զետեղում դրանք այն հերթականությամբ, ինչպես աղբյուրում: Ես դա անվանել եմ հաջորդական փոխառություն:

Այս տեխնիկայի մի հստակ օրինակ կա Stromateis-ի 2-րդ գրքում (2, 78-100), որտեղ Կղեմեսը մեծ հատվածներ է մեջբերել Փիլոնի De virtutibus («Առաքինությունների մասին») գրքից: Այստեղ նա տալիս է իր աղբյուրի մի տեսակ "Readers Digest"-ը: "Readers Digest"-ը ամերիկյան հանդես է, որը տպում է տարբեր պարբերականներից հոդվածների նմուշներ՝ երբեմն սեղմված, պարզեցված և վերաշարադրված ձևով: Կղեմեսը ճիշտ նույն կերպ է վարվել: Հետաքրքիր մի փաստ. Կղեմեսը երբեմն իր աղբյուրի սկզբից չի սկսում, այլ հիշում է մի հատված մեջտեղից (Virt. 34-35), ապա վերադառնում է դեպի երկի սկիզբը (Virt. 8-9) և այնտեղից սկսած, հերթականությամբ մեջբերումներ անում, մի քանի տող ընտրելով փաթույթի յուրաքանչյուր սյունակից՝ հասնելով մինչև վերջ (Virt. 8-9 Virt. սկսած մինչև 215-217, ընդհանուր հաշվով 30 մեջբերում): Այս գործելաոճը կարելի է բացատրել տեսանելի կերպով. հեղինակը նախ մեջբերում է անում հիշողությամբ, հետո աթոռից վեր կենում և համապատասխան փաթույթ փնտրում գրադարանի դարակներում: Բացելով փաթույթը՝ նա ավելի ու ավելի է հետաքրքրվում և սկզբից մինչև վերջ կարդում այն: Երբեմն փոխում է մեջբերումների հերթականությունը, հավանաբար փաթույթը բացելով ոչ թե առաջ, այլ հետ: Այսպիսով, Փիլոնի երկերի օգտագործումը տեխնիկապես երևան է բերում նրա աշխատանքի որոշ հնարները: Բարեբախտաբար, Փիլոնի բազմաթիվ գործեր են պահպանվել և համեմատության եզր ունենք:

Անդրադառնանք փոխառությունների բովանդակությանը. Կղեմեսը սիրում էր Փիլոնից վերցնել Յոթանասնիցին, օրինակ՝ Հագարին, Սառային կամ Մովսեսի կյանքին վերաբերող, այլաբանական հատվածներ: Մովսեսի պարագայում Կղեմեսը սուրբգրային պատմությունը պատմում է ոչ թե Յոթանասնիցի բնագրի, այլ Փիլոնի խոսքերով, քանի որ վերջիններս ավելի գրավիչ են. Փիլոնը զանազան հոգեբանական մանրամասներ է ներհյուսել Մովսեսի պատմությանը, և

Սուրբ գրքի համեմատ նրա պատմածն ավելի հյութեղ է: Պետք է նաև հիշել, որ Կղեմեսը քրիստոնյա ընտանիքում չի մեծացել, ուստի կարող էր այնքան լավ ծանոթ չլինել աստվածաշնչյան պատմություններին, ինչպես Փիլոնը, իսկ հետագայում՝ Օրիգենեսը:

Կղեմեսը Փիլոնից այնպիսի խնդիրներ է ընտրել, ինչպես Աստծո մարդակերպության արտահայտումները Աստվածաշնչում, և թե ինչպես պետք է բացատրել դրանք, կամ այն հարցը, թե ինչպես պետք է այլաբանական մեկնության միջոցով աստվածաշնչյան տեսարանները կապել առաքինի կյանքի հետ: Մեկ այլ ոգեշնչման աղբյուր, Փիլոնի գրվածքներում, նրա մտահայեցողական դատողություններն են գիտելիքի և իմաստության, կամ վերամբարձման և խոկման մասին: Մինչ այդ թեմաներն իրար են հաջորդում Փիլոնի բնագրին համընթաց, Կղեմեսը փորձում է վերամշակել նյութը տարբեր եղանակներով և նոր նպատակների համար: Չնայած մեջբերումներն ու ակնարկները բազմաթիվ են, վերջնական արդյունքը միանգամայն նոր տեսք է ստանում:

Կղեմեսն, անշուշտ, շատ մարզված հիշողություն ուներ, սակայն նաև պարզ է, որ լավ գրադարանի առկայությունն է նպաստել մեջբերումներ անելու նրա կարողությանը: Ալեքսանդրիայում Կղեմեսի գրածները վկայում են, որ նրան մատչելի է եղել Փիլոնի երկերի մեծ մասը, իսկ «Ստրոմատեյս»-ի վերջին մասում և քաղաքից մեկնելուց հետո գրված մյուս գործերում, մեջբերումները Փիլոնից զգալիորեն պակասում են: Կան միայն հատ ու կենտ մեջբերումներ Ծննդոցի հարցուպատասխանիից (Str. VI 80, 3 - QG III 3; Str. VI 84, 7- 85, 4 - QG I 91; Str. VI 138, 2 - QG III 43)[14]*: Թվում է, Փիլոնի երկերը նրա համար այլևս մատչելի չէին՝ բացառությամբ այդ մեկ գործի:*

3. Օրիգենես

Օրիգենեսը, որ ապրել է մոտ 185-253 թթ., ամենահեղինակավոր քրիստոնյա աստվածաբաններից էր, չնայած այն երկար ժամանակահատվածին, երբ աղանդավոր է համարվել: Նրա կյանքի մասին ամենաշատ տեղեկություններ են հաղորդում Եվսեբիոսը «Եկեղեցական պատմության» 6-րդ գրքում և Գրիգոր Սքանչելագործը «Օրիգենեսի ներբող»-ում: Գրիգորը նրա աշակերտն էր և կարևոր կապող օղակ՝ Օրիգենեսի ու կապադովկացիների միջև: Ըստ Եվսեբիոսի՝ Օրիգենեսն Ալեքսանդրիայում քրիստոնեական դաստիարակություն է ստացել, նաև՝ ավանդական հունական կրթություն: Նրա հայրը նահատակվել է 202 թ., և երիտասարդ Օրիգենեսը դարձել է քրիստոնեական դպրոցի ուսուցիչ, իսկ շուտով նաև գլխավորել այն, մինչև 231 թ.:

---

[14] **Van den Hoek**, *Clement of Alexandria*, 100. 201.

Օրիգենեսի գրական ժառանգությունը շատ ավելի հարուստ է, քան Կղեմեսինը. վերջինս համեմատաբար համեստ է և պահպանվել է միայն հունարեն: Օրիգենեսի շատ ավելի մեծաթիվ գործեր մեզ են հասել ոչ միայն հունարեն, այլև լատիներեն թարգմանությամբ, ինչը համեմատության համար խնդիրներ է ստեղծում: Բացի այդ, Օրիգենեսի մեծ թվով երկեր, հիմնականում՝ աստվածաշնչյան մեկնություններ, բոլորովին չեն պահպանվել ոչ մի լեզվով: Փիլոնի հետ առնչվող ամենից արժեքավոր գրքերից՝ Հնգամատյանի և Ծննդոց գրքի մեկնություններից ընդամենը քաղվածքներ են պահպանվել շղթա մեկնությունների մեջ: Այնուամենայնիվ, դրանք զգալի են ծավալով և Մինի (Migne, Patrologia Graeca, 150 հատոր) հրատարակության մեջ 50 սյունակ են կազմում: Պահպանված լինելու դեպքում մեկնությունը հարյուրավոր էջերի կհասներ:

Փիլոնից Օրիգենեսի ընտրությունը նման է Կղեմեսինին, օրինակ՝ որոշ գրքերի (De Posteritate, De Congressu, De Vita Moysis) դիմելու հաճախականության առումով: Սակայն, ի տարբերություն Կղեմեսի, Օրիգենեսի երկերում բացակայում են մեջբերումներ De Cherubim գրվածքից, իսկ De opificio mundi նշանակալից տեղ է զբաղեցնում, մինչդեռ Կղեմեսի մոտ այն գրեթե նկատելի չէ:

Փոխառությունների նյութը մի կողմից աստվածաշնչյան մեկնություններ ու այլաբանություններ են, մյուս կողմից՝ փիլիսոփայական գաղափարներ: Այս բաժանումն անշուշտ սխեմատիկ է և արհեստական, քանի որ աստվածաշնչյան այլաբանությունները հաճախ փիլիսոփայական և բարոյական բաղադրիչներ են պարունակում: Երկրորդ խմբի կենտրոնական խնդիրն աշխարհի ստեղծումն է, աստծո մասին տեսությունը և այլ ընդհանուր փիլիսոփայական թեմաներ:

Կղեմեսն ու Օրիգենեսը Փիլոնի հետևորդներ են՝ այն իմաստով, որ զուգակցում են այլաբանական մեկնությունները պլատոնական մտահայեցողության հետ: Օրիգենեսը, սակայն, Փիլոնի ժառանգությունն ավելի լավ է ներկայացնում, այդ այլաբանական հնարքները նոր բարձուքների հասցնելով, ներառելով ավանդական տարրեր, ինչպես ստուգաբանությունն է, թվերի այլաբանություն և մարդակերպության տարրեր: Նորկտակարանյան պատմություններն ու առակները, ըստ Օրիգինեսի, ի հայտ են բերում նոր հանգամանքներ, որոնք հաստատում են Հին Կտակարանի այլաբանությունները: Օրիգենեսը ոչ միայն շեշտում է Փիլոնի կարևորությունը Սուրբ գրքի մեկնության և օրենքի այլաբանական բացատրության համար, այլև այդ հատվածներից երևում է, որ հենց այդպիսի նյութ է Օրիգենեսը քաղել նրանից: Ավելին, Օրիգենեսն օգտագործել է Փիլոնին որպես տեսական օրինակ, որին կարող էր ապավինել և օգտագործել պաշտպանվելու համար, երբ քրիստոնեական աստվածաշնչյան մեկնությունը հարձակման էր ենթարկվում, ինչպես դա արել է «Կելսոսի դեմ» իր երկում: Ինչպես հայտնի է, Կելսոսը հակաքրիստոնեական գործ էր գրել, մերժելով շատ

քրիստոնեական հավատալիքներ՝ որպես բանականության դեմ և անգամ մոլորեցնող։ Երբեմն, Կելսոսին պատասխանելիս, Օրիգենեսը դիմում է Փիլոնին, անգամ հանվանե հիշատակում նրան, ինչը նշանակում է, որ Փիլոնը նրա համար հեղինակություն է[15]*։*

Առհասարակ, Օրիգինեսի՝ Փիլոնի մեթոդի ըմբռնումը համընկնում էր իր սեփական գործելակերպի հետ։ Օրիգենեսը Փիլոնին օգտագործել է որպես այլաբանական մտահայեցողության անսահմանափակ աղբյուր՝ թեպետ ինքն էլ լիովին կարող էր կիրառել այլաբանական մեթոդները։ Նա ավելի շատ է պարտական Փիլոնին, բայց և ավելի անկախ է նրանից, քան Կղեմեսը։

4. Վերջաբան

Ե՛վ Կղեմեսը, և՛ Օրիգենեսը իրենց մեծ հրեա նախորդի հետ կիսում են մտավոր խիզախությունն ու կրթության հանդեպ բնական հակումը։ Կղեմեսը նշում էր, որ տարբերություն կա սկսնակ և ավելի առաջացած աշակերտների միջև, ինչպես և հետագայում Օրիգենեսը (այդ մասին տեղեկանում ենք Եվսեբիոսից), որը սկսնակներին հանձնում էր «ուսուցչի օգնականին», իսկ առաջացածներին պահում իր համար[16]*։*

Դպրոցի կառուցվածքը հետազոտության գրավիչ առարկա է՝ ոչ միայն երկու քրիստոնյա ալեքսանդրացիների, այլև Փիլոնի պարագայում։ Պրոֆ. Ռունիան հիշատակեց Փիլոնի գրվածքների սոցիալական միջավայրի՝ պրոֆ. Գռեգորի Սթերլինգի ներկայիս ուսումնասիրությունը։ Սթերլինգը պնդում է, որ Փիլոնի աստվածաշնչյան մեկնությունների և այլ գործերի ամենից հավանական միջավայրը այն դպրոցն էր, որտեղ քննարկվում էին մեկնողական և փիլիսոփայական հարցեր։ Ուրեմն, Փիլոնի գրական արտադրանքը ոչ թե փղոսկրյա աշտարակում մեկի ստեղծագործելու, այլ ուսուցման և երկխոսության շատ աշխույժ մի միջավայրի արդյունք է[17]*։*

Ինձ համար զարմանալի է, որ Կղեմեսը և Օրիգենեսը նման օրինակով են կազմակերպում տարբեր մակարդակներում ուսուցանելու համար նախատեսված իրենց նյութերը։ Այդ հարացույցը կարելի է տեսնել հենց Փիլոնի մոտ։ Նրա Ծննդոց և Ելից մեկնությունները սկսնակ աշակերտների համար են, Այլաբանական մեկնությունը՝ ավելի առաջացածների, իսկ Օրենքի մեկնությունը՝ հավանաբար ավելի լայն և արտաքին լսարանի։ Սա կարելի է համեմատել Կղեմեսի երկերի հետ. Protrepticus-ը գործ է ավելի լայն լսարանի համար, Paedagogus-ը՝ սկսնակների, իսկ Stromateis-ը նախատեսված էին կրթված և նյութի

---

[15] **Runia**, *Philo in Early Christian Literature*, 160.

[16] Կղեմեսի համար տե՛ս *Str.* 1, 2, 2; 9, 1; 13, 2, Օրիգենեսի համար՝ Eusebius, *HE* 6, 15, 1:

[17] **Runia**, “The Armenian Corpus of Philo and Recent Philonic Scholarship,” 6.

մեջ խորացած ընթերցողի համար: Իհարկե, սրանք շատ ընդհանուր համեմատություններ են, ուստի և երբեմն ոչ ճշգրիտ, բայց և կարող են արտացոլել Ալեքսանդրիայի փիլիսոփայական դպրոցների ավանդույթը, որը սահմաններ չէր դնում տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև:

Փիլոնի և Ալեքսանդրիայի քրիստոնեական ավանդույթի քննության համար առանցքային է գրքերի պահպանվածությունը: Ինչպես նշել եմ, Ալեքսանդրիայում Կղեմեսի գրած գրքերը ցույց են տալիս, որ նրա համար հասանելի էր Փիլոնի գրվածքների մեծ մասը: Իսկ քաղաքից հեռանալուց հետո գրված վերջին երեք Stromateis-ում և այլ երկերում Փիլոնից մեջբերումները զգալիորեն պակասում են՝ առկա է միայն մի քանի մեջբերում Ծննդոց-ին վերաբերող հարցուպատասխանիների գրքերից: Նշանակում է, որ ուրիշ գրադարաններ, թերևս, ավելի վատ էին համալրված, քան Ալեքսանդրիայինը, և գրքերի առկայությամբ էր պայմանավորված հեղինակների՝ մեջբերումներ անելու հնարավորությունը, անկախ նրանց հիշողության որակից:

Դժբախտաբար, հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ինչպես են Փիլոնի և այլ հրեական գրվածքներ հայտնվել քրիստոնեական գրադարաններում: Քանի որ ստույգ տվյալներ չկան, կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչպես են Փիլոնի ձեռագրերը ընդօրինակվել I դարի վերջին և II դարում: Օրինակ, հնարավոր է, որ որոշ հելլենականացված հրեաներ, որոնք ուսումնասիրել էին Սուրբ Գիրքն ու հրեահունական գրականությունն առհասարակ, կարող էին քրիստոնեություն ընդունած լինել, սակայն, պահպանած իրենց պապենական փաթույթները: Մեկ այլ սցենար կարելի է պատկերացնել. II դարասկզբում հրեաների ապստամբության դաժան ճնշման ժամանակ քրիստոնյաները՝ ինչպես հրեաներ, այնպես էլ ոչ հրեաներ, կարող էին յուրացրած կամ, եթե այլ կերպ արտահայտվենք՝ փրկած լինել գրքերի հավաքածուները: Դժբախտաբար, այդ շրջանի Ալեքսանդրիայի և՛ հրեականությունը, և՛ քրիստոնեությունը ծածկված են խավարով:

Փիլոնի գրվածքները պահպանվել են Ալեքսանդրիայի քրիստոնեական ավանդույթի շնորհիվ, քանզի առաջին անգամ հայտնվել են Կղեմեսի գործերում, իսկ Օրիգենեսը Պաղեստինյան Կեսարիայում է դրանք զարգացրել: Գոնե Կղեմեսի համար, Փիլոնի հետ կապը նշանակում էր կապ ոչ թե կենդանի հրեական ավանդույթի, այլ գրական ժառանգության հետ: Օրիգենեսի շնորհիվ, որն Ալեքսանդրիայից տեղափոխվեց Կեսարիա, Փիլոնի գրվածքները հայտնվեցին այդ քաղաքի եպիսկոպոսական գրադարանում և կազմում են մեզ հասած փիլոնյան բնագրերի հիմքը: Հնարավոր է, երբեք չիմանայինք Փիլոնի բազմաթիվ երկերը, եթե չլիներ ալեքսանդրյան քրիստոնեական ավանդույթը:

ANNEWIES VAN DEN HOEK

THE CHRISTIAN RECEPTION OF PHILO'S WORKS IN ALEXANDRIA

Key-words: Philo of Alexandria, Jewish community of Alexandria, Clement of Alexandria, Origen, library, borrowing, different audiences.

The Philonic corpus owes its preservation to the Christian tradition of Alexandria; its first appearance is in the works of Clement, and its extension occurs via Origen in Caesarea. The link with Philo at least for Clement was no longer with a living Jewish tradition but with a literary heritage. Thanks to Origen who moved from Alexandria to Caesarea, Philo's writings ended up in the episcopal library of that city and form the basis of the text of Philo's works as they have been transmitted to us. One might never have known the many works of Philo were it not for the Christian Alexandrian tradition.

АННЕВИС ВАН ДЕН ХУК

ХРИСТИАНСКАЯ РЕЦЕПЦИЯ ТРУДОВ ФИЛОНА В АЛЕКСАНДРИИ

Ключевые слова: Филон Александрийский, еврейская община Александрии, Климент Александрийский, Ориген, библиотека, заимствование, разные аудитории.

Филоновский корпус сохранился благодаря александрийской христианской традиции. Впервые он обнаруживает себя в трудах Климента, связь которого с Филоном больше не осуществлялась через живую еврейскую традицию, но только через литературное наследие. Благодаря Оригену, который переселился из Александрии в Палестинскую Кесарию, труды Филона оказались в епископальной библиотеке этого города и составляют основу дошедших до нас филоновских текстов. Произведения Филона могли бы остаться неизвестными, если бы не христианская традиция Александрии.